

ԱՆՏԵԱՆԻ ԵՐԵՄԻԱ ՎՊԱՅ



Ողջո՛յն, ոգիդ գերազանց, անմահ Մուսայդ երկնատես.
 Յաւիտենից լուռ քննով այսպէս և դո՛ւ կը նընջես.
 Արշալոյսին ծընընդեանդ հրեշտակաց պարը քննքոյշ
 Մասեաց տրուաւ աւետիս, նըւագելով երգ անոյշ:

Նոր արփենի նըշոյլդ էր որ Աղբիոյ խորշերէն
 Մինչև բարձունքը Մասեաց կը սըլանար արծուօրէն.
 Ըզբեզ տեսան, ո՛վ անմահ, մեր Հարց ոսկերքն ի շիրմին
 Եւ խայտացին յուսալից, կեանք և ոգի նոր առին:

Երբ կ'ողբար հայը՝ խուժողով թըրքաց լուծին տակ դըժնէ՝
 Դու փըրկուժեան արուսեակը ծագեցար երկընքէ.
 Խաղաց ոգին հայրենեաց, վառեց հըրով սիրտդ ամբիծ
 Եւ յաղթանակը լոյսին ըզմեզ դիտեց ժըմտալից:

Ազատութեան սուրբ սիրով Ազգ, Հայրենիք զղըրդեցիր
 Ողջունելով հայրենեաց լեռներն անմահ լուսածիր.
 Եւ Եփրատայ, Արաքսի ափերուն վրայ ծաղկաւէտ
 Կեանքիդ օրերն անցուցիր, մըրմընջելով անոնց հետ:

Քանի՛ անգամ արցունքով թափառեցար սըգաւոր
 Աւերակաց մէջ, աւա՛ղ... տեսնել Հայ ազգ դարաւոր.
 Գըտար յուշերն մեր Նախնեաց, տեսար փառքերն անցելոյն,
 Հոնտեղ ուսար Հայրենիք՝ վըրկաներէն անխօսուն:

Գըտար հոն կրակն Հայկայ տան, աւերակաց մէջ թաքուն
 Եւ վառեցիր դու իսկոյն յառաջադէմ ազգ մ'ողջոյն,
 Ու լարելով նուրբ մատամբ հոգեզմայլիկ քո քննար՝
 Մինչև յետին շունչդ անմահ նըւագեցիր Հայ աշխարհ:

Որփէական քնարէն ալ քաղցր էր հրաւերդ հոգեթունդ,
 Որ բորբոքեց վառ սիրով Հայոց քաջեր գունդագունդ.
 Զարթեաւ քննէն դարաւոր Հայաստանի սուրբ Ոգին,
 Աւերակներն իսկ մաշած Հայոց փառքերն հընչեցին:

Ո՛վ մեծ հոգի, բայց խոնարհ, տեսար ղու զայն, հիացար...
 Թէ ինչպէս կայծն այն փոքրիկ ծընաւ հրդեհն բոցավառ.
 Քարի բեկոր մ'էր քու ձայնըդ լընացեալ մէջ ծովուն
 Որ բիւր ալիք հանելով ալեկոծեց սիրտն Հայուն:

Աւա՛ղ, արեւդ անձկալի փութով շիջաւ... չըտեսար
 Այրարատի գագաթին սուրբ Միածանն հաշտարար.
 Սակայն ոգի՛դ վեհ՝ տեսաւ չըքնաղ գարունը Հայոց,
 Զոր քաղցր երգով նըլագեց... ու մեկնեցաւ շիրմին ծոց:

Մեռար այ՛ո՛, բայց Հայուն անմահ շընչով կ'ապրիս ղու
 Վարդաններու առաջնորդ, նոր Եղիշեակ հոգեբառ.
 Ո՛հ, միթէ հնար է մոռնալ քու պաշտելի վեհ անուն
 Որուն հընչիւնն անգամ լոկ կը գալարէ սիրտն Հայուն:

Հոմերոսի, Վիրգիլեայ փափկահընչիւն թէ քընար
 Խորիստ Աքիլլէսն և Ալգոստ կ'անմահացնէ դարէ դար,
 Հայաստանի տենչալի յաւերժացնող սուրբ անուան,
 Հանճարներո՛ւ պարագլուխ, դո՛ւն ես, անմահ Ալիշան:

Մեր Հարց արեամբ ներկեցին Հայաստանի հողն ու քար,
 Դուն սէրն անոյշ և Հաւատը, անոնց արիւն փրկարար
 Եւ հայրենեաց հողն ու քար ամփոփեցիր քրտինքով
 Բազմածաւալ պրակներուդ և նըլագաց մէջը ծով:

Քանի՛ գաւառը հայրենի Այրարատէն կիլիկիա,
 Անմահ էջեր զբաւեցին կոթողներուդ մէջ հըսկայ,
 Զորքս կըտակ թողուցիր Հայոց մանկանց սիրասուն
 Տեսնել հոն Հայ հայրենիք, մեր Հարց հաւատըն և արիւն:

Ինչ արդեօք Հայ աշխարհին չերգեց քնարիդ քաղցրիկ լար,
 Նախնեաց երկիր պաշտելի՛ յիշատակօքն իւր հազար.
 Աւերակաց իսկ նշխարը Թաղուած ի խոր խաւարի
 Միթէ չէր լոյսըդ պայծառ որ ցուցադրեց աշխարհի:

Քանի՛ գողտրիկ երգեցիր ճոխութիւններն հայրենի,
 Աստուածակոխ այն լեռներ, և հովիտներ ջրբարբի.
 Եւ ծաղիկներ բազմերփեան, բիւր վըտակներ ու լըճեր
 Որոնք անխօս բերանով Նահապետիդ կ'երգեն սէր:

Նըւագեցիր հոգեթունդ արքայարան և ոստան,
 Շահաստաններն աւերակ ու կոթողներն յաղթական,
 Հայ վանորայքն ու տաճար, Հայրապետներ սրբաասուն,
 Աշխարհակալ արքաներ, Նահատակներ դիւցազուն:

Դուն սիրեցիր մինչ ի մահ ըզՀայաստան սիրով վառ,
 Դրգուելով փուշն իսկ անոր քան զեղանի վարդն օտար.
 Փոքրիկ էր սիրտդ, ոգիդ մեծ, բայց կը կըրէր բովանդակ
 Իր մէջ սիրով աղետարշ Հայաստանի փառքն համակ:

Երգեցիր դու, նուաղեցար... կը մեռնէիր, ո՛վ անմահ,
 Դեռ Հայաստանն էր բերանդ, դեռ սուրբ անուն վարդանայ.
 Ահա լուսնակն արծաթի զոր երգեցիր նազելի
 Կու տայ ողջոյն հրաժեշտի, համբոյր շիրմիդ պաշտելի:

Ո՛ղ էրթ, Մուսայդ աննըման, ո՛վ ծերունիդ դու «ցամաք»
 Տուր երջանիկն աւետիս ոգիներուն մեր Հաբանց,
 Թէ անձկալին ի դարուց զարուհն Հայոց է հասած,
 Ազատութեան ջինջ արփին զմեզ ողջունեց զըրկարաց:

Դիտեց դէմքով ժմտալից Այրարատի վեհ զագաթ՝
 Համբուրելով հայորդեաց վաստակաւոր սուրբ ճակատ.
 Հայաստանի հոգն անոյշ կու տայ գողտրիկ քեզ համբոյր,
 Եւ ջուրն յըստակ փըթթեցնէ շիրմիդ վըրայ ծաղկունք բիւր:

Եւ խըններամ հայրենի մանուկներու պար սիրուն,
 Հոնտեղ կուսանք պարերգու, պատանիներ եռանդուն
 Խունկ և ծաղիկ ցանելով պիտի երգեն քու անուն,
 Ո՛վ Նահապետ ալեոր, ոգի և կեանք հայերուն:

Կոթողներու վրան անջինջ ապագային բիւր դարեր
 Պիտի դրոշմին սուրբ անունդ, հայ կեանք բոլոր քեզ նըւէր,
 Հըսկայ Մուսայդ Մասիսի, Մըխիթարայ՝ Պարծանք Տան
 Կեցցեա յաւէտ դուն անմահ, Հայր Հայրենեաց Ալիշան:

ԵՂ. Ե. ՓԷՉԻԿԵԱՆ